



Primacy of the Armenian Apostolic Orthodox Church
of the United Kingdom and Republic of Ireland

His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

Saint Yeghiche Armenian Church Parish Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցոյ Ծովի

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan

13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB

Registered Charity No 1173403

Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. info@styeoghiche.org.uk
www.styeoghiche.org.uk <https://www.facebook.com/StYeghiche>

SUNDAY BULLETIN

1: Today's Scripture Reading,

17th March 2019

Bulletin 11/2019

Third Sunday of Great Lent—The Prodigal Son

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ 2 ԿՈՐՆՔԱՑԻՆԵՐԻՆ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ 6:1-7:1

Որովհետև կըսէ. «Պատեհ ժամանակին պատասխանեցի քեզի, եւ փրկութեան օրը օգնեցի քեզի»: Ահա՛ հիմա է պատեհ ժամանակը, ահա՛ հիմա է փրկութեան օրը:

Բնա՛ւ սայթաքում չենք պատճառեր՝ որեւէ բանի մէջ, որպէսզի մեր սպասարկութիւնը չարատարորուի: Հապա ամէն բանի մէջ մենք մեզ կը հաստատենք որպէս Աստուծոյ սպասարկուներ, շատ համբերութեամբ, տառապանքներու մէջ, հարկադրանքներու, տագնապներու, ծեծերու, բանտերու, խառնակութիւններու, աշխատանքներու, հսկումներու, ծոմերու մէջ, մաքրակեցութեամբ, զիտութեամբ, համբերատարութեամբ, քաղցրութեամբ, Սուրբ Հոգիով, անկեղծ սիրով, ճշմարտութեան խօսքով, Աստուծոյ զօրութեամբ, արդարութեան զրահով՝ որ աջ կողմէն ու ձախ կողմէն է. փառքով եւ անպատուութեամբ, վատ համբաւով թէ բարի համբաւով, մոլորեցուցիչներու պէս՝ բայց ճշմարտախօսներ, անձանօթներու պէս՝ սակայն լաւ ճանչցուածներ. մահաւերձի պէս՝ եւ ահա՛ կ'ապրինք, պատժուածներու պէս՝ ու չենք մեռցուած. տրտմածներու պէս՝ բայց միշտ կ'ուրախանանք, աղքատներու պէս՝ սակայն կը հարստացնենք շատերը, ոչինչ ունեցողներու պէս՝ մինչդեռ տիրացած ենք ամէն բանի:

Կորնթացիներ՝, մեր բերանը բացուած է ձեզի, եւ մեր սիրտը՝ լայնցած: Դուք մեր մէջ նեղը ինկած՝ չէք, հապա ձեր սիրտին մէջ՝ նեղը ինկած էք: Ուրեմն, փոխարէնը հատուցանելու համար (կը խօսիմ ձեզի՝ իբր զաւակներուս), դուք ալ ձեր սիրտը լայնցուցէք՝:

Անհաւատներուն հետ անյարիր լծակից՝ մի՛ ըլլաք. քանի որ ի՞նչ ընկերակցութիւն ունի արդարութիւնը անօրէնութեան հետ, ի՞նչ հաղորդութիւն ունի լոյսը խաւարին հետ, եւ ի՞նչ միաբանութիւն ունի Քրիստոս Բելիարի հետ. կամ ի՞նչ բաժին ունի հաւատացեալը անհաւատին հետ, եւ ի՞նչ համաձայնութիւն ունի Աստուծոյ տաճարը կոռքերուն հետ, որովհետև դուք ապրող Աստուծոյ տաճարն էք՝ ինչպէս Աստուած ըսաւ. «Անոնց մէջ պիտի բնակիմ եւ անոնց մէջ պիտի շրջիմ. անոնց Աստուած պիտի ըլլամ ու անոնք ինձի ժողովուրդ պիտի ըլլան»:

Ուստի ելէ՛ք անոնց մէջէն եւ զատուեցէ՛ք,- կըսէ Տէրը:- Անմաքուր բանի մի՛ դպչիք, ու ես պիտի ընդունիմ ձեզ. ես Հայր պիտի ըլլամ ձեզի, ու դուք՝ իմ որդիներս եւ աղջիկներս պիտի ըլլաք,- կըսէ Ամենակալ Տէրը»:

The Epistle of St Paul to the 2 Corinthians 6:1-7:1

Working together with him, we also appeal to you, "Don't receive the grace of God in vain." For he says:

At an acceptable time I listened to you, and in the day of salvation I helped you. See, now is the acceptable time; now is the day of salvation!

The Character of Paul's Ministry

We are not giving anyone an occasion for offense, so that the ministry will not be blamed. Instead, as God's ministers, we commend ourselves in everything: by great endurance, by afflictions, by hardships, by difficulties, by beatings, by imprisonments, by riots, by labours, by sleepless nights, by times of hunger, by purity, by knowledge, by patience, by kindness, by the Holy Spirit, by sincere love, by the word of truth, by the power of God; through weapons of righteousness for the right hand and the left, through glory and dishonour, through slander and good report; regarded as deceivers, yet true; as unknown, yet recognized; as dying, yet see — we live; as being disciplined, yet not killed; as grieving, yet always rejoicing; as poor, yet enriching many; as having nothing, yet possessing everything. We have spoken openly to you, Corinthians; our heart has been opened wide. We are not withholding our affection from you,

2: A short interpretation of the Scripture reading

but you are withholding yours from us. I speak as to my children; as a proper response, open your heart to us.

Separation to God

Don't become partners with those who do not believe. For what partnership is there between righteousness and lawlessness? Or what fellowship does light have with darkness? What agreement does Christ have with Belial? Or what does a believer have in common with an unbeliever? And what agreement does the temple of God have with idols? For we are the temple of the living God, as God said:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԷՏԱՐԱՆԵՆ ԸՍՏ ԴՈՒԿԱՍԻ 15:1-32

Բոլոր մաքսաւորներն ու մեղաւորները անոր կը մօտենային՝ զինք լսելու համար: Իսկ Փարիսեցիները եւ դպիրները կը տրտնջէին ու կըրէին. «Ասիկա կընդունի մեղաւորները եւ կուտէ անոնց հետ»:

Ան ալ սա՛ առակը խօսեցաւ անոնց. «Ձեզմէ ո՞վ է այն մարդը, որ եթէ ունենայ հարիւր ոչխար ու կորսնցնէ անոնցմէ մէկը, չի ձգեր իննսունինը անապատին մէջ եւ երթար այդ կորսուածին ետեւէն, մինչեւ որ գտնէ զայն: Ու երբ գտնէ, ուրախանալով կը դնէ զայն իր ուսերուն վրայ, եւ տուն գալով՝ կը հրաւիրէ բարեկամներն ու դրացիները, եւ կըսէ անոնց. “Ուրախացէ՛ք ինծի հետ, որովհետեւ գտայ կորսուած ոչխարս”»: Կը յայտարարեմ ձեզի թէ ա՛յսպէս ուրախութիւն պիտի ըլլայ երկինքը մէկ մեղաւորի համար՝ որ կ'ապաշխարէ, քան իննսունինը արդարներու համար՝ որոնց ապաշխարութիւն պէտք չէ»:

«Կամ՝ ո՞վ է այն կինը, որ եթէ տասը դրամ ունենայ ու դրամ մը կորսնցնէ, ճրագ չի վառեր, տունը չ'աւեր եւ ուշադրութեամբ փնտռեր, մինչեւ որ գտնէ: Ու երբ գտնէ, կը հրաւիրէ բարեկամներն ու դրացիները, եւ կըսէ. “Ուրախացէ՛ք ինծի հետ, որովհետեւ գտայ կորսնցուցած դրամս”»: Ա՛յդպէս ալ, կը յայտարարեմ ձեզի, ուրախութիւն կըլլայ Աստուծոյ հրեշտակներուն առջեւ մէկ մեղաւորի համար՝ որ կ'ապաշխարէ»:

Ապա ըսաւ. «Մարդ մը ունէր երկու որդի: Անոնցմէ կրտսերը ըսաւ հօրը. “Հա՛յր, տո՛ւր ինծի քու ունեցածէ ինծի վիճակուելիք բաժինը”»: Ան ալ բաժնեց անոնց իր ունեցածը: Շատ օրեր չանցած՝ կրտսեր որդին ժողվեց բոլոր բաները, մեկնեցաւ հեռաւոր երկիր մը, ու հոն փճացուց իր ունեցածը՝ անառակութեամբ ապրելով: Երբ ծախսեց ամէնը՝ սաստիկ սով մը եղաւ այդ երկրին մէջ, եւ ինք սկսաւ կարօտութեան մէջ ըլլալ: Ուստի գնաց՝ այդ երկրին քաղաքացիներէն մէկուն քով մտաւ. ան ալ իր արտը դրկեց զայն՝ խոզ արածելու համար: Կը ցանկար խոզերուն կերած եղջիւրէն իր փորը լեցնել, բայց ո՛չ մէկը կու տար անոր: Եւ ինքնիրեն գալով՝ ըսաւ. “Քանի՛ վարձկաններ կան հօրս տունը՝ հացով լիացած, ու ես հոս սովամահ կը կորսուիմ: Կանգնիմ, երթամ հօրս քով եւ ըսեմ անոր. “Հա՛յր, մեղանչեցի երկինքի դէմ ու քու առջեւ, եւ ա՛յլ արժանի չեմ քու որդիդ կոչուելու. ըրէ՛ զիս վարձկաններէդ մէկուն պէս”»: Ուստի կանգնեցաւ ու գնաց իր հօր քով: Մինչ ինք դէռ շատ հեռու էր՝ հայրը տեսաւ զայն եւ գրթաց. վազելով՝ անոր վիզին վրայ ինկաւ ու համբուրեց զայն: Որդին ալ ըսաւ անոր. “Հա՛յր, մեղանչեցի երկինքի դէմ ու քու առջեւ, եւ ա՛յլ արժանի չեմ քու որդիդ կոչուելու”:

Բայց հայրը ըսաւ իր ծառաներուն. “Հանեցէ՛ք առաջին պարեգօտը եւ հագցուցէ՛ք անոր, մատանի՛ դրէք անոր ձեռքը ու կօշիկներ՝ անոր ոտքերը: Եւ բերէ՛ք պարարտ զուարակը, մորթեցէ՛ք, ուտե՛նք ու զուարճանա՛նք. որովհետեւ այս որդիս մեռած էր՝ եւ վերապրեցաւ, կորսուած էր՝ ու գտնուեցաւ”:

Եւ սկսան զուարճանալ:

Անոր երեց որդին արտն էր. երբ եկաւ ու մօտեցաւ տան, լսեց նուագարաններու եւ պարերու ձայնը, ու իրեն կանչելով ծառաներէն մէկը՝ հարցափորձեց թէ ի՛նչ էր այդ: Ան ալ ըսաւ անոր. “Եղբայրդ եկաւ, ու հայրդ մորթեց պարարտ զուարակը, որովհետեւ ողջ առողջ վերստացաւ զայն”:

Իսկ ինք բարկացաւ եւ չէր ուզեր ներս մտնել. ուստի իր հայրը դուրս ելլելով՝ կ'աղաչէր անոր: Ան ալ պատասխանեց իր հօր. “Ահա՛ այսչափ տարի է՝ որ կը ծառայեմ քեզի, ու բնա՛ւ քու պատուիրանդ զանց չըրի. սակայն երբէ՛ք ուլ մը չտուիր ինծի՝ որ զուարճանայի բարեկամներուս հետ: Բայց երբ եկաւ այդ որդիդ՝ որ լափեց քու ունեցածդ պռոնիկներու հետ, մորթեցիք անոր պարարտ զուարակը”:

Ան ալ ըսաւ անոր. “Որդեա՛կ, դուն միշտ ինծի հետ ես, ու ամբողջ ունեցածս քո՛ւնկդ է: Սակայն պէտք էր զուարճանալ եւ ուրախանալ, որովհետեւ այս եղբայրդ մեռած էր՝ ու վերապրեցաւ, կորսուած էր՝ եւ գտնուեցաւ”»:

The Holy Gospel of Jesus Christ according to Luke 15:1-32

The Parable of the Lost Sheep

All the tax collectors and sinners were approaching to listen to him. And the Pharisees and scribes were complaining, "This man welcomes sinners and eats with them."

So he told them this parable: "What man among you, who has a hundred sheep and loses one of them, does not leave the ninety-nine in the open field and go after the lost one until he finds it? When he has found it, he joyfully puts it on his shoulders, and coming home, he calls his friends and neighbours together, saying to them, 'Rejoice with me, because I have found my lost sheep!' I tell you, in the same way, there will be more joy in heaven over one sinner who repents than over ninety-nine righteous people who don't need repentance."

The Parable of the Lost Coin

"Or what woman who has ten silver coins, if she loses one coin, does not light a lamp, sweep the house, and search carefully until she finds it? When she finds it, she calls her friends and neighbours together, saying, 'Rejoice with me, because I have found the silver coin I lost!' I tell you, in the same way, there is joy in the presence of God's angels over one sinner who repents."

The Parable of the Lost Son

He also said: "A man had two sons. The younger of them said to his father, 'Father, give me the share of the estate I have coming to me.' So he distributed the assets to them. Not many days later, the younger son gathered together all he had and travelled to a distant country, where he squandered his estate in foolish living. After he had spent everything, a severe famine struck that country, and he had nothing. Then he went to work for one of the citizens of that country, who sent him into his fields to feed pigs. He longed to eat his fill from the pods that the pigs were eating, but no one would give him anything. When he came to his senses, he said, 'How many of my father's hired workers have more than enough food, and here I am dying of hunger! I'll get up, go to my father, and say to him, "Father, I have sinned against heaven and in your sight. I'm no longer worthy to be called your son. Make me like one of your hired workers."' So he got up and went to his father. But while the son was still a long way off, his father saw him and was filled with compassion. He ran, threw his arms around his neck, and kissed him. The son said to him, 'Father, I have sinned against heaven and in your sight. I'm no longer worthy to be called your son.'

"But the father told his servants, 'Quick! Bring out the best robe and put it on him; put a ring on his finger and sandals on his feet. Then bring the fattened calf and slaughter it, and let's celebrate with a feast, because this son of mine was dead and is alive again; he was lost and is found!' So they began to celebrate."

"Now his older son was in the field; as he came near the house, he heard music and dancing. So he summoned one of the servants, questioning what these things meant. 'Your brother is here,' he told him, 'and your father has slaughtered the fattened calf because he has him back safe and sound.'

"Then he became angry and didn't want to go in. So his father came out and pleaded with him. But he replied to his father, 'Look, I have been slaving many years for you, and I have never disobeyed your orders, yet you never gave me a goat so that I could celebrate with my friends. But when this son of yours came, who has devoured your assets with prostitutes, you slaughtered the fattened calf for him.'

"'Son,' he said to him, 'you are always with me, and everything I have is yours. But we had to celebrate and rejoice, because this brother of yours was dead and is alive again; he was lost and is found.'"

Սուրբ Կյուրեղ Երուսաղեմի Հայրապետի, Կյուրեղ եպիսկոպոսի և նրա մոր՝ Աննայի հիշատակության օր

Մբ. Կյուրեղ Երուսաղեմցին 4-րդ դարի նշանավոր հայրապետներից է: Նա բազմիցս հետապնդվել է Արիոսական հերձվածի կողմնակիցների կողմից, աքսորվել, սակայն ի վերջո վերահաստատվել է հայրապետական աթոռին: Մասնակցել է 381 թվականի Կ.Պոլսի Բ Տիեզերական ժողովին: Կյուրեղ Հայրապետի քրիստոնեական վարդապետության մասին բազմաթիվ քարոզներ ու ճառեր միջնադարում թարգմանվել են նաև հայերեն, իսկ Երուսաղեմի երկնականարում Մբ. Խաչի երեսման առիթով Կոստանդինոս կայսերն ուղարկած նրա թուղթն առ այսօր ընթերցվում է հայոց եկեղեցիներում: Առավել հայտնի է Կյուրեղ Հայրապետի «Կոչումն ընծայութեան» ճառերի և քարոզների ժողովածուն, որն ուսանելի է բոլոր նրանց համար, ովքեր պատրաստվում են մկրտության: Ըստ ավանդության՝ Երուսաղեմի Մբ. Հակոբ եկեղեցու Մբ. Ստեփանոս մատուռի մեջ է գտնվում այն ավազանը, որտեղ մկրտվել է Կյուրեղ Հայրապետը:

Մբ. Կյուրեղ Հայրապետի անունը Հայ Եկեղեցում հիշատակվում է երկու անգամ՝ Մեծ Պահքի երկրորդ շաբաթ օրը և 12 վարդապետների շաբթում՝ հոկտեմբերի վերջին շաբաթ օրը: Մբ. Կյուրեղ Հայրապետի ժամանակակիցն է Մբ. Կյուրեղ եպիսկոպոսը (նախկին անունը՝ Հուդա): Ըստ վարքագրական աղբյուրների՝ տեղանքին լավատեղյակ լինելով, օգնել է Հեղինե դշխային գտնելու Քրիստոսի խաչափայտը: Տեսնելով Մբ. Խաչի հրաշագործ գորությունը, իր մոր՝ Աննայի հետ մկրտվում է՝ անվանակոչվելով Կյուրեղ:

Խաչի հրաշագործ գորությունը, իր մոր՝ Աննայի հետ մկրտվում է՝ անվանակոչվելով Կյուրեղ: Հետագայում ձեռնադրվում է եպիսկոպոս, իսկ Կյուրեղ Հայրապետի աքսորում լինելու ժամանակ փոխարինում է նրան: Կյուրեղ եպիսկոպոսը, ենթարկվելով անասելի կտտանքների, նահատակվում է մոր հետ, Հուլիանոս Ուրացոյի հետապնդումների ժամանակ: Սբ. Կյուրեղ եպիսկոպոսի և նրա մոր՝ Աննայի հիշատակության օրը նշվում է Սբ. Կյուրեղ Հայրապետի հետ միասին՝ Մեծ Պահքի երկրորդ շաբաթ օրը:

Commemoration of St. Cyril the Patriarch of Jerusalem, St. Cyril the Bishop of Jerusalem and his mother Anna

St. Cyril of Jerusalem is one of the prominent Patriarchs of Jerusalem. He has been repeatedly persecuted by the supporters of the Arian heresy, he has been exiled, and however, eventually again has become the Patriarch of Jerusalem. He has participated in the Second Ecumenical Council of Constantinople. Many sermons and speeches of the Patriarch Cyril about Christian doctrine have been translated into Armenian. His letter addressed to the King Costandios on the occasion of the apparition of the Holy Cross in the sky of Jerusalem is up to date read in the Armenian churches. Patriarch Cyril's collection of sermons is instructive and edifying for those who are preparing for baptism. According to the tradition the basin in which Patriarch Cyril has been baptized is inside the Chapel of St Stephen of the Church of St. Hakob (St. James), of Jerusalem.

The Armenian Apostolic Church commemorates the memory of the Patriarch Cyril twice during the year.

St. Cyril the Bishop is the contemporary of St. Cyril the Patriarch. His secular name is Huda. According to the hagiographical sources, well knowing the locality, Bishop Cyril helps the queen Heghine (Helen) to find the Holy cross of Christ, Witnessing the wonder-working power of the Holy Cross Bishop Cyril is baptized together with his mother, Anna, and after the baptism is renamed "Cyril". Later he is ordained a bishop and during the period of exile of the Patriarch Cyril he takes his place for a time. Being subjected to severe torments, Bishop Cyril and his mother have been killed during the persecutions realized by the King Julianos the Betrayer.

Անառակի կիրակի

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ապաշխարության և պահքի մի գեղեցիկ շրջան է սահմանել հավատացյալների համար, որի կիրակիներից յուրաքանչյուրն իր անվանումն ունի Աստվածաշնչի որևէ պատմությանը համապատասխան: Մեծ Պահքի երրորդ կիրակին կոչվում է Անառակի, ըստ Ղուկասի Ավետարանում հիշատակվող անառակ որդու մասին պատմող առակի՝ (տես Ղուկ. 15:11-32) մի մարդ իր կրտսեր որդու խնդրանքով ունեցվածքը բաժանում է երկու որդիների միջև: Կրտսեր որդին իր բաժինը վերցնելով գնում է հեռու երկիր, ապրում ցոփ ու շվայտ կյանքով, վատնում ամբողջ ունեցածը:

Այս դժվար դրության մեջ նա հիշում է հայրական տունը, զոջում կատարածի համար և վերադառնում: Հայրը, տեսնելով որդու զոջումը, ուրախությամբ ընդունում է նրան: Ավագ որդին դժգոհում է, որ ինքը միշտ հոր կողքին է եղել, սակայն նման պատվի երբեք չի արժանացել: Հայրը պատասխանում է, որ պետք է ուրախ լինել, քանի որ՝ ով մեռած էր, կենդանացավ: Ավագ, կրտսեր որդիներն արդար և մեղավոր հոգիներն են, և ինչպես հայրն է անառակ որդուն ընդունում, նույն կերպ էլ Աստված է իր գիրկն առնում զոջացող մեղավորին: Առակը նաև հետևյալ խրատն ունի, որ բացահայտվում է ավագ որդու կերպարում: Ովքեր կարծում են, թե արդար են, պետք է խուսափեն սեփական անձի մասին չափազանց բարձր կարծիք ունենալուց:

Sunday of the Lost (Prodigal) Son

The third Sunday of the period of Great Lent is called the Sunday of the Lost Son according to the Parable of the Lost Son told in the Gospel of Luke (Luke 15:15-32), the content of which is the following. There was once a man who had two sons. Upon the request of the younger one he divided his property between his two sons. After a few days the younger son sold his part of the property and left home with the money. He went to a country far away, where he wasted his money in reckless living.

He spent everything he had. Then a severe famine spread over that country and he was left without a thing. In that time of trouble he remembered his father's house, regretted for his reckless living and returned to his father's home. Seeing that his younger son has regretted, the father received him joyfully. Whereas the elder son complained, saying that during all those years he had worked for his father like a slave and had never disobeyed his orders, and however, he had never deserved such honour. His father answered him: "My son, you are always here with me, and everything I have is yours. But we had to celebrate and to be happy, because your brother was dead, but now he is alive; he was lost, but now he has been found." The elder and the younger sons are the righteous and the sinful souls, and father's receiving his lost son means that in the same way God receives the regretting sinner. The allegoric meaning of the parable is in the elder son symbolizing all those who are righteous or think that there are righteous. The parable admonishes all of them not to be self-conceited.

Մեկնություն եւ պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Եւ երբ գտնի, կը կանչի բարեկամներին ու հարեւաններին եւ կ'ասի. «Ուրախացէ՛ք ինձ հետ, որովհետեւ գտայ...» (Ես. 55:7):

Աստծուն որդեգրուած սիրելի եղբայրներ եւ քոյրեր,

Մի պահ եթէ պատկերացնենք շուրջերկրեայ մեծ ծովագնացութեան ելած խոշոր նաւերը, որոնք ամիսներ շարունակ կարող են նաւել մեծ ջրերում, կը հասկանանք, թէ որքան կարեւոր են այն նաւահանգիստները, որտեղ նաւերը պարէնով եւ վառելիքով համալրուում են, որպէսզի շարունակեն յետագայ ճանապարհը: Մեծ Պահքն էլ հոգեւոր նաւագնացութիւն է, որտեղ կիրակիները հոգեւոր նաւահանգիստ-կանգաւաններ են՝ մեր հոգին սնող, առաջնորդող եւ զօրացնող:

Այս կիրակին մեր եկեղեցում կոչուել է Անառակի կիրակի՝ ակնարկն ունենալով Աւետարանի յայտնի պատմութիւնը, ուր հօր տունը լքած կրտսեր որդին անառակ կեանքից եւ երկար դժգոհումներից յետոյ որոշում է վերադառնալ հայրական տուն եւ ընդունուում է գթառատ հօր կողմից: Ուրախացած հայրը նրան վերականգնում է որդիութեան պատուի մէջ, նրա համար պարարտ եզն է մորթել տալիս եւ մեծ խնջոյք անում: Իսկ հանդից վերադարձող աւագը սրտնեղում է հօրից, որի արարքն իրեն անարդար է թւում եւ յապաղում է խնջոյքին միանալ: Մենք այդպէս էլ չը գիտենք՝ ի վերջոյ աւագ որդին մտնո՞ւմ է եղբորը հանդիպելու եւ ուրախութեանը մասնակցելու, թէ ոչ:

Ամբողջ ուղերձը թերեւս կորածին գտնելու եւ վերադարձով ուրախանալն է: Պատահական չէ, որ այս առակից առաջ Քրիստոս պատմում է իննսունիննին թողած եւ անգամ մէկ մոլորուած ոչխարին փնտրող ու գտնող հովիւի եւ կորած դրամը գտնող կնոջ ուրախութեան մասին, որ իրենք կիսում են "բարեկամների եւ հարեւանների" հետ:

Շատ է խօսուել այս պատմութիւններում յիշուող կորած ոչխարի, դրամի եւ հայրական տունն ինքնակամ լքած եւ անառակացած զաւակի մասին՝ խոկման նիւթ դարձնելով հոգեւոր անառակութիւնը, Հայր Աստծուց մարդկութեան հեռացումը եւ վերադարձի կանչը: Սակայն կարեւորագոյն կերպար է կորածին փնտրողը: Ո՞վ է այդ փնտրողը: Եթէ կորած ոչխարի եւ դրամի դէպքում փնտրողները հովին ու աւրող կինն են, ո՞վ է անառակ որդուն փնտրողը.. Պատասխանը մէկն է՝ Աստուած: Փրկիչն է այս բոլոր կերպարների մէջ մեզ ներկայանում իբրեւ մեծագոյն փնտրող եւ տուն կանչող...

Անառակ որդու պարագայում այդ կանչը սրտում է հնչում, ինչպէս մինչեւ հիմա էլ բոլոր ապաշխարողների սրտում զնգում է Աստծոյ Որդու ձայնը՝ "Ինձ մօտ եկե՛ք"-ը: Քրիստո՛ս է բարի հովիւը, որ ոչ միայն հոգեւոր արոտավայրերում է արածեցնում մեզ, այլեւ պաշտպանում է հոգեւոր գայլերից եւ իր ունեւրին դրած վերադարձնում մեզ, երբ կորչում ենք մեղաւոր կեանքի ոլորաններում: Քրիստոսի մարմին Եկեղեցի՛ն է այն կինը, որ ապաշխարութեան աւելով մաքրում է մեր ներսի տաճարը եւ մեր հոգու տերունական պատկերից թոթափում մեղքի փոշին՝ վերականգնելով մեր մէջ Աստծոյ նմանութիւնը:

Յետեւաբար ամենամեծը Աստծո՛յ ուրախութիւնն է, որ տեսնում է իր կանչին պատասխանող սրտերը, կորածի գտնուելը, անառակի ապաշխարութիւնն ու վերադարձը, մեռած հոգու կենդանացումը..:

Հայրն ուզում է, որ իր ապաշխարող զաւակի վերադարձով իր ուրախութիւնը կիսեն բոլորը եւ ուրախութեան եւ խնջոյքի հրաման է տալիս ծառաներին՝ ասելով. «...ուրախ լինենք, որովհետեւ իմ այս որդին մեռած էր եւ կենդանացաւ, կորած էր եւ գտնուեց» (Ղուկ. 15.24):

Հայրն ուրախացաւ եւ ուզեց, որ աւագ որդին էլ ցնծայ այդ մեծ տօնով: Իր ես-ով տարուած բարկացած աւագին, որ չէր ուզում տուն մտնել, հայրը դուրս գալով աղաչում էր եւ նույն բառերով ասում. «.. բայց պետք էր ուրախ լինել, որովհետեւ քո այս եղբայրը մեռած էր եւ կենդանացաւ, կորած էր եւ գտնուեց» (Ղուկ. 15.32):

Եկեղեցին Աստծոյ ընտանիքն է, ամէն մկտրեայ արդէն Հօր զաւակն է եւ միւսներին քոյր կամ եղբայր: Հօր ուրախութիւնը նաեւ ամբողջ ընտանիքի ուրախութիւնն է, որովհետեւ ընտանիքից է պակասել, հեռացել զաւակը եւ իր վերադարձով պետք է ուրախ լինեն միւս եղբայրներն ու քոյրերը: Իսկ քանի որ Եկեղեցին միայն երկրի վրայ չէ, այլ նաեւ երկնքում, ուրախութեան առաջին օրինակը տալիս են հրեշտակները, ինչի մասին յիշում է Քրիստոս. «Ասում են ձեզ. Աստծոյ հրեշտակների առաջ այսպէս ուրախութիւն կը լինի մէկ մեղաւորի համար, որն ապաշխարում է» (Ղուկ. 15.10):

Եկէ՛ք մենք էլ քարոզենք իր զաւակների վերադարձին սպասող Հօր մասին, փնտրելու ելած Որդու մասին, մեր սրտերում Աստծուն "Աբբա՛, Հայր" կանչելու մղող Սուրբ Հոգու մասին եւ խօսենք, որ վերադարձի պետք ունենք բոլորս իւրովի: Եւ մանաւանդ ուրախանանք ամէն մի ապաշխարող ու վերադարձող հոգով, որովհետեւ Աստծոյ առաջ ոչ մի մեղք աւելի մեծ չէ, քան իր սերն ու ներողամտութիւնը:

«Երբ նա ձեզ մօտենայ, ամբարիշտը թող հրաժարուի իր ընթացքից, անօժն մարդը՝ իր խորհուրդներից, թող նա վերադառնայ Տիրոջ մօտ եւ ողորմութիւն կգնտի, մեր Աստծոյ մօտ, որը բազմապատիկ թողութիւն պիտի շնորհի ձեր անօրինութիւններին:» (Ես. 55:7):

Տէր Յիսուս Քրիստոսի շնորհը, Աստծու սերը եւ Սուրբ Հոգու հաղորդութիւնը ձեզ հետ լինեն: Ամէն:

Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան

March 17th, 2019



Shoghk News

In this Issue:

- ◆ A word from our Priest in Charge
- ◆ List of Upcoming Events at St Yeghiche Armenian Church

St Yeghiche Armenian Church Parish Newsletter

Welcome to Shoghk Newsletter

The purpose of our SHOGHK newsletter is to inform our parishioners and community wide with various activities taking place at our Parish.
St Yeghiche Armenian Church Parish Council.

A word from our Priest in Charge:

"Միբելի հաւատակից եղբայրներ եւ քոյրեր,

Սուրբ Եղիշէ Հայոց Եկեղեցու եւ ներհամայնքային բազմազան իրադարձութիւններն առաւել յամախումբ են դարձնում մեզ մեր հոգեւոր եւ ազգային կենցաղի մէջ: Սուրբ Եղիշէի եկեղեցու "Շողք" լրատուական թերթօնը գալիս է օգտակար կերպով ազդարարը լինելու գալիք եկեղեցական եւ համայնքային տօների եւ միջոցառումների: Մեզ համար ուրախալի է, որ նախորդ տարիներին ձեռնարկուած հրատարակութեան աւանդոյթը շարունակելու եւ առաւել ծաղկեցնելու, նոր բաժիններով յագեցնելու հնարաւորութիւնն ունենք օրհնութեամբ Սրբազան Հօր եւ գործակցութեամբ մեր ծխական խորհուրդի եւ ծխականների: Յուսով ենք, որ այս նախաձեռնութիւնը նոր խթան կը դառնայ մեր հայրենակիցների համար՝ աւելի աշխոյժ եւ կենդանի մասնակցութիւն բերելու եկեղեցական եւ ազգային հանդէսներին, զօրացնելու ծխական եւ համայնքային կեանքը, օրինակով կրթելու եւ ոգեւորելու ետեւից քայլող սերունդին: Այս ճանապարհով է, որ նոր տեսլականները (visions) կեանքի կը կոչուեն, մարմին կհագնեն եւ կը ոռոգեն հաւատքային եւ հայրենական մեր անդաստանի ակօսները: Թող Աստուած միասիրտ եւ սիրով լեցուն պահի մեր հոգեւոր մեծ ընտանիքը՝ նոր ձեռնարկումներով փառաւորելու Աստծուն եւ բարձրացնելու ազգի անունը:

Միրով եւ աղօթական օրհնութեամբ՝ " **Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեա**

List of upcoming events at St Yeghiche Armenian Church.

We are pleased to announce the following events taking place at St Yeghiche Armenian Church. Your attendance and participation is highly welcomed. Divine Liturgy takes place at St Yeghiche Armenian Church every Sunday at 11:00.

Armenian Lenten Services

The Peace Service, Rest Service and Sunrise Service are performed more often during Great Lent than at other times of the year. (Usually, Peace and Rest Services are performed only on Friday evenings.) These three services are part of the Church's cycle of seven daily worship services but are of significance during Great Lent because they are penitential in nature and remind us of the effort we are making to restore our pure and joyous relationship with God.

The evening Peace Service consists of prayers for peace to end each day. These prayers remind us that God is with us even in the face of trial and temptation.

The Rest Service, which comes just before retiring for the night, asks God's continuing care through the night. It includes the prayer of St. Nersess.

The Sunrise Service, performed first thing in the morning, reminds us that God is the giver of the light of morning and the light of salvation. Its beautiful prayers and hymns reflect the fresh and serene quality of the most beautiful time of day. This service is performed in our churches before or after Sunday morning liturgy. (<http://stjamesevanston.org/great-lent>)

Special Services during the Great Lent

□ **The Services of the Hour of Peace and the Hour of Rest** will take place at St. Sarkis Church every Friday evening at 6:30 pm. Lenten food will be served at Gulbenkian hall (£5 donation pp). St Yeghiche Ladies Guild will be serving on **Friday 29th March 2019**. Please join and support their efforts.

□ **The Sunrise Services** will take place at Arajnordaran (Bishops' House) every Wednesday at 10:30 am, starting from March 13th. At the end of service Tea and Coffee will served. Any donations are welcome.

□ **The Sunrise Services** will also take place at St Yeghiche Armenian Church every Sunday morning, before Divine Liturgy starting at 10:30 am.

WEDNESDAY 27TH March 2019 Michink

Be Strengthen in your journey and celebrate mid-lent together with St Yeghiche Ladies Guild, MICH-INK a special luncheon with guest of honour His Grace Bishop Hovakim Manukyan.

The mid point of lent is special, and it is called "Michink" meaning "Middle" in Armenian. It is a traditionally observed occasion, which morally inspires and encourages steadfastness, so that the faithful will continue on their Lenten journey.

Please join with your family and children our ladies on 27th March 2019 at Navasartian Centre starting from 11:30 am. For further information and reservation please call Arline on 07938 947204 or Setta on 07973 482969 or Aida on 07503 989897. Your kind support to your St Yeghiche Armenian church is Highly appreciated. For the flyer visit our website or follow our Facebook at

www.styeghiche.org.uk or <https://www.facebook.com/StYeghiche>

Holy and Great Tuesday 16th April 2019 Աւագ Երեքշաբթի,

St Yeghiche Armenian Church is please to inform our Faithful that this year we will be holding **18:30** Remembrance of The **Ten Virgins**, Evening Service prayers (Տասը կոյսերի յիշատակութեամբ երեկոյեան ժամերգութիւն) starting at 18:30. **We invite all our Community Members to this unique service.**

St Yeghiche Choir

St Yeghiche Armenian Church is looking for people of all ages to be members of the choir. If you would like to be in the choir and be uplifted by singing our beautiful "Sharagans" (hymns) just come to church on any Sunday and introduce yourself to our Choirmaster Mr Aris Nadirian or to any Member of the Parish Council.

Serving at the Alter:

One of the great things about our community at St Yeghiche Parish is the involvement of so many of our young people as alter servers. They not only help Mass to run smoothly but they help the whole community to focus on prayers and celebrate our faith. Being a server helps them to join actively in prayers and to grow in self-confidence. They gradually learn about the mass and take more responsibility. So if you'd like to be involved please contact our coordinator of Alter servers Archdeacon Sarkis or talk to Rev Fr Nshan or contact the parish office at 020 7373 8133 or write to info@styeghiche.org.uk. Deacons Training sessions is every Tuesday evening at Bishops House

Pilgrimage to Italy:

7 day Pilgrimage to Italy and General audience with His Holiness Pope Frances

Primates office has put together a 7 day pilgrimage package to visit Naples, Rome, Vatican, Florence and Venice . Travel date is 5th to 11th May 2019. while in Rome the group will have a general audience with Pope Frances and get his blessing . For full details please ask the primates office or St Yeghiche Armenian Church desk or a member of the Parish Council. This is a very well thought package which is highly recommended.

St Yeghiche Armenian Church Parish.

Reg Charity No 1173403

13b Cranley Garden, Kensington London SW7 3BB

t. 020 7373 8133, e. info@styeghiche.org.uk w. www.styeghiche.org.uk, f. www.facebook.com/styeghiche,

3: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

By Viken, Hourie, Zovig and Arda Haladjian for the soul of their Cousin the late **HRAIR HALADJIAN** (Հրայր Հալաճեան) on the 40th day memorial of his passing in Beirut Lebanon, also for all the old and new deceased members of the **HALADJIAN** Family.

By Garo & Zvart Stepanian and Family for the soul of their Parents, Grandparents and Relatives the late **ISHKHAN** and **FILOR AZOYAN**, **JOSEPH** and **ELBIS STEPANIAN**, **GEORGE** and **NEVART KHLOYAN** and **ANTRANIG MARDIROSIAN**, also for all the old and new deceased members of the **AZOYAN**, **STEPANIAN**, **KHLOYAN** and **MARDIROSIAN** Families.

By Hovnan and Carmen Hampartsoumian and Family for the soul of their sister and Aunt, the late **BELLA MENASSAKANIAN** of USA, also for all the old and new deceased members of **MENASSAKANIAN** and **HAMPARTSOUMIAN** families.

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

Rev Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan at 07548 777 147.

Ձեր ամեն տեսակի հոգեւոր կարիքներուն եւ Խորհրդակատարութիւններուն՝ Տնօրինէքի, հիւանդի այցելութեան, Սբ Հաղորդութեան ստանալու եւ այլ խնդրանքներուն համար դիմեցէք Եկեղեցի 020 7373 8133, կամ ուղղակի հեռաձայնեցէք Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեանին 07548 777 147:

ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: **07970 146 280** or **020 7373 8133** or by emailing info@styeghiche.org.uk
Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.

Requiem Service (Hokehankisd)

For Requiem Service (Hokehankisd), please call the church office at **020 7373 8133**, or e-mail us your request to info@styeghiche.org.uk by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated. **Please remember our Church in your prayers.** *Your kind donations are gratefully accepted.*

ANNOUNCEMENT:

St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the side entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk

St Yeghiche Parish Council appeals to all members for **prompt** payment of their **annual membership dues and generous donations**, thus saving your parish administrative and postage costs.

Please hand in your membership dues and donations to the members of the Parish Council at the side entrance desk of the Church. Alternatively please post your cheque to: St Yeghiche Armenian Church Parish, *13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB*. Please make your cheques pay-able to: **“St Yeghiche Armenian Church”**. You can also pay by bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at: HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

St Yeghiche Armenian Church is a Registered Charity, Reg No 1173403. Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.